

Ս $\frac{11}{4}$

10.01.07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԻԹԻ ԷԲՐԱՅԻՄԻ ՖԱՐԱԶԻ

ՆԻԶԱՍՈՒ «ԽՈՍՐՈՎ ԵՎ ՇԻՐԻՆ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԱՂԵՐՍՆԵՐԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ժ. 01. 07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության բեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

ԳԱԱ ակադեմիկոս
Սերգեյ Ներսեսի Սարինյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Արմանուշ Կոզմոյի Կոզմոյան

բանասիրական գիտությունների
թեկնածու
Վարդան Գևորգի Դևրիկյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Հայ-ռուսական
սլավոնական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. մարտի 15-ին ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՅ-ի հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. փետրվարի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Ա. Մարգարյան



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Իրանական գրականության գեղեցիկ և պայծառ էջերից է «Խոսքով և Շիրին» սիրավեպը, որի գեղարվեստական մշակմանն են դիմել, ինչպես նաև իրենց տարբեր ստեղծագործություններում հիշատակել մի շարք պարսից բանաստեղծներ, այդ թվում և Ֆիրդուսին:

Այս պատմությունն ունի մի քանի տարբերակներ և հեղինակներից յուրաքանչյուրն ըստ իր նախասիրության է դիմել այս կամ այն տարբերակին: Իր խոր հուզականության, սիրո, կյանքի ու մահվան հարցերն արծարծելու համար այս պատմությունը սիրված է եղել ոչ միայն իրանական գրականությունում, այլև դարձել է ընդհանուր արևելյան մի սիրավեպ, պատմվելով Արևելքի տարբեր երկրների ժողովուրդների կողմից: Խոսքով ու Շիրինը սիրահար զույգի և անմար սիրո մի չխամրող օրինակ են, և հուզում են նաև այսօրվա ընթերցողին անկախ ազգային պատկանելությունից:

Ատենախոսությունը նվիրված է այս ստեղծագործության քննությանը Նիզամու երկերի ընդհանուր համատեքստում, ինչպես նաև վերջինիս անդրադարձին հայ գրականությունում: Այս անդրադարձը ներկայացվող ատենախոսությունում դիտարկվում է առավել լայն համատեքստում, ոչ միայն «Խոսքով և Շիրին»-ի պատմության առկայությունը հայ գրականությունում սկսած Սեբեոսի Պատմությունից, այլև վեր են հանվում ժողովրդական կյանքի այն սովորույթներն ու ազգագրական նկարագրությունները, որոնց բանաստեղծական անդրադարձը գտնում ենք Նիզամու այս ստեղծագործությունում և թե՛ հայ բանահյուսությունում ու միջնադարյան գրականությունում:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎՎԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իրանական և հայ գրականությունները համաշխարհային և, ի մասնավորի, արևելյան գրականությունների, ինչպես նաև հնդեվրոպական ակունքներից եկող ընդհանրությունների համատեքստում դիտարկելու համար մեծապես կարևորվում է գրական այս կամ այն հուշարձանը ոչ միայն գեղարվեստական վերլուծության ենթարկելը, այլև քննությունը

համեմատական գրականության տեսանկյունից: Այսինքն տվյալ ստեղծագործության սյուժեն կազմող թեման ինչպես է հանդես գալիս մյուս ժողովուրդների գրականությունում:

Նիզամու «Խոսրով և Շիրին» պոեմի համեմատությունը հայ միջնադարյան գրականության հետ վեր է հանում մի շարք ուշագրավ ընդհանրություններ, որոնք ավելին են քան գրական փոխազդեցությունները և պայմանավորված են երկու ժողովուրդների առավել խորը աշխարհայացքային ընդհանրությամբ:

Թեման ուշագրավ է նրանով, որ այստեղ վերլուծվում են այդ խորքային երևույթները, վեր են հանվում իրանական և հայ գրականությունը սնուցած ժողովրդա-ազգագրական միջավայրերը ժողովրդական կենցաղով, ազգագրությամբ և բանահյուսությամբ:

Ուսումնասիրության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է ատենախոսությունում տեղ գտած սկզբնաղբյուրային հարուստ նյութերով և հարցադրումների կարևորությամբ: Երկու ժողովուրդների գրականություններից բերված սկզբնաղբյուրային այս նյութը հնարավորություն է տալիս հայ գրականությունը դիտարկել իրանական գրականության տեսանկյունից և հակառակը:

Սույն աշխատանքը կարող է օգտագործվել հայ-իրանական գրական կապերին նվիրված ծեռնարկներում, ուսումնասիրություններում և քրեստոմատիաներում, ինչպես նաև ունենալ գիտաճանաչողական նշանակություն երկու ժողովուրդների փոխառնակցության խնդիրներով զբաղվողների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան պարսից մեծ բանաստեղծ Նիզամու «Խոսրով և Շիրին» ստեղծագործության և հայ գրականության միջև առկա աղերսների վերհանումն է:

Ատենախոսության հիմնական նպատակն է համեմատական գրականագիտության ընծեռած հնարավորությունների շրջանակում վեր հանել իրանական և հայ գրականությունում առկա այն սկզբնաղբյուրներն ու

ազգագրական նյութը, որը համապատասխան բանաստեղծական վերաշարադրանքով հանդիպում է «Խոսրով և Շիրին» ստեղծագործությունում:

Ատենախոսության խնդիրներն են.

1. Ցույց տալ համեմատական գրականագիտության ընծեռած հնարավորությունները հայ-իրանական գրական-մշակութային կապերի և փոխառնակցությունների վերհանման գործում:
2. Բնության նման մեթոդով վերլուծել «Խոսրով և Շիրին» պոեմը:
3. Ներկայացնել «Խոսրով և Շիրինի» պատմության տարբերակները և դրանց անդրադարձը իրանական գրականությունում:
4. Վերհանել «Խոսրով և Շիրինի» պատմության մասին հայ գրականությունում առկա պատմությունները:
5. Ուսումնասիրել «Խոսրով և Շիրին»-ում տեղ գտած սովորությունների, հավատալիքների, ծեսի և կենցաղի մասին եղած հիշատակությունները իրանական գրականությունում:
6. Ուսումնասիրել «Խոսրով և Շիրին»-ում տեղ գտած համաբնույթ հարցերը հայ գրականությունում:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Նիզամու ստեղծագործությունների և հատկապես «Խոսրով և Շիրին»-ի մասին շատ է գրվել: Այս ուսումնասիրություններում, սակայն, հիմնական շեշտադրումը դրվել է սիրավեպի բանաստեղծական արժանիքների վերհանման վրա:

Այս աշխատանքի նորույթն այն է, որ Նիզամու գործը քննվում է համեմատական գրականագիտության մեթոդով, շնորհիվ որի հնարավոր է լինում այդ երկը դիտարկել գրական կապերի և փոխազդեցությունների շրջանակում:

Հաջորդ կարևոր նորույթն այն է, որ այս ստեղծագործության թեմատիկ-սյուժետային դրվագների հայ գրականությունում տեղ գտած հիշատակություններից բացի համեմատական քննության միջոցով ներկայացվում և վերլուծվում են իրանական և հայ գրականություններում

տեղ գտած այն բոլոր սովորություններն ու հավատալիքները, որոնց գրական - բանաստեղծական անդրադարձը կա «Խոսրով և Շիրին» ստեղծագործությունում:

Շնորհիվ նման քննության թեմատիկ փոխազդեցություններին գուգահեռ առաջ է քաշվում պատմա-մշակութային և միջավայրային ընդհանրության և փոխառնչակցության գաղափարը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ- ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՔԸ

Ատենախոսությունը գրված է գրականագիտության արդի սկզբունքներով և որպես մեթոդ կիրառված է համեմատական գրականագիտության, ինչպես նաև կիրառվել են կենսագրական, քննական, համեմատական և համադրական քննության եղանակները:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել վերջին տասնամյակների գրականագիտական ուսումնասիրություններն ու հողվածները, և հատկապես իրանցի գիտնականների աշխատանքները և հայ գիտնականների այն համաբնույթ գործերը, որոնք թարգմանաբար կան պարսկերեն և անգլերեն:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնում: Ուսումնասիրության հիմնախնդիրներն արտացոլվել են գիտական տարբեր ժողովածուներում և ամսագրերում հրատարակված հոդվածներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ուսումնասիրությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում ներկայացվում է հարցի պատմությունը, համեմատական գրականագիտության որպես գրականագիտական մեթոդ և վերջինիս կիրառումը «Խոսրով և Շիրին» սիրավեպի քննության համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Այս գլխի սկզբում ներկայացվում է համեմատական գրականագիտության, որպես գրականագիտական քննության մեթոդի առաջ գալը և նրա կարևորությունը տարբեր ժողովուրդների գրականություններում և հատկապես ժողովրդական ստեղծագործություններում առկա ընդհանուր օրինաչափությունները վեր հանելու գործում: Նման քննության մեթոդի գլխավոր նպատակը ոչ թե տվյալ ստեղծագործության արժանիքների վերհանումն է, այլ այն մյուս ժողովուրդների համանման ստեղծագործություններում առկա սյուժետային դրվագների հետ համեմատությունը, որով վերջինիս քննության առարկան ոչ թե առանձին ժողովուրդների գրականությունների վերլուծությունն է, այլ միևնույն թեմայի, սյուժեի ու դրվագի քննությունը տարբեր ժողովուրդների մոտ:

Ուսումնասիրության այս եղանակի անցած պատմության և նշանակալից ուսումնասիրությունները ներկայացնելուց հետո, ասելիքը տեղայնացվում է իրանա-հայկական գրական-պատմական փոխառնչակցությունների վրա, որոնք պայմանավորված են թե՛ միևնույն լեզվընտանիքին պատկանելով և թե՛ որպես հարևան երկրներ ու ժողովուրդներ հազարամյակների պատմա-մշակութային շփումներով և փոխառնչակցություններով:

Բերվում են Հայաստանի մասին հին իրանական աղբյուրներում եղած հիշատակությունները սկսված Դարեհ Առաջինի Բիհասթունյան արձանագրությունից, ինչպես նաև հունա-հռոմեական աղբյուրների հիշատակությունները հայ-իրանական կապերի և ժողովրդական կենցաղի միջև եղած ընդհանրությունների մասին:

Ավանդների շարունակականությունը և ժառանգորդությունը ընդգծելու համար այս ընդհանրությունների թվարկումն ժամանակագրական ընթացքով հասցվում է մինչև մեր օրերը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԻԶԱՄԻ ԳԱՆՁԱՎՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում նախ բերվում են Նիզամուն վերաբերվող հիշատակությունները իրանական գրականությունում և նրա ծննդավայրի ու ծննդյան թվականի մասին հայտնված կարծիքները, որոնք բաժանվում են երկու խմբի.

ա. Նիզամին ծնվել է Գանձակ (Գյանջա քաղաքում այսպես է անվանվել այս քաղաքը իրանական աղբյուրներում):

բ. Նիզամին ծնվել է Ղոն քաղաքում, սակայն նա հանրահայտ է դարձել Գյանջայում, որտեղից էլ այս տեղանունը մատնանշող նրա մականունը:

Արևելքի բանաստեղծներին բնորոշ ճակատագիր է ունեցել Նիզամին: Բանաստեղծական հռչակը նրան տարել է արքունիք, սակայն բանաստեղծը չցանկանալով կորցնել իր ազատությունը, նախընտրում է թափառական բանաստեղծի ճակատագիրը:

Ենթադրվում է, որ նա վախճանվել է 1235թ. Գյանջայում 84-85 տարեկանում:

Նիզամու բոլոր գործերն ամփոփված են «Խամսե» ժողովածուի մեջ: «Խամսե» պարսկերեն նշանակում է հինգ և այստեղ գտնում ենք նրա հինգ պոեմները, որոնցից առաջինն է «Մախզան-Օլ -Ասրարի»-ն (2260 տող), երկրորդը՝ «Խոսրով և Շիրին» (6500տող), երրորդը՝ «Լեյլի և Մանջուն» (4600 տող), չորրորդը՝ «Բահրամ Նամե» (5136 տող), հինգերորդը՝ «Իսկանդարնամե», որը կազմված է երկու բաժնից՝ «Շարաֆ Նամե»՝ Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը և արշավանքները, և «Էդբալ Նամե», որը ներկայացնում է Ալեքսանդր Մակեդոնացու և ժամանակի նշանավոր մտածողների հարաբերությունները:

Աշխատանքի այս գլխում տրվում է մեծ բանաստեղծի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը և փոխառնչակցությունը ժամանակի աշխարհայացքի, գեղագիտական ըմբռումների և բնագիտական հայացքների հետ:

Նիզամին ունեցել է իր հետևորդները, որոնք գրել են որոշակի գրական նմանակմամբ նրան հետևելով, սկսած արդեն 13-րդ դարից: Նման առաջին բանաստեղծն է եղել Ամիր Խոսրով Դեհլավին, որի Նիզամուն հետևողությունն արտահայտվել է սկսած նրա գործերի վերնագրերից, որոնք հարասություն են Նիզամու վերջ հիշված պոեմների վերնագրերի: Այսպես՝ Նիզամի- «Մախսան-Օլ- Ասրար» Դեհլավի- «Մոթալա- Օլ -Անվար», Նիզամի- «Խոսրով և Շիրին» և «Լեյլի ու Մաջուն» Դեհլավի «Շիրին և Խոսրով» ու «Մաջուն ու Լեյլի», Նիզամի «Հավթ Գոնգադ» - Դեհլավի «Հավթ Փեքյար», Նիզամի «Իսկանդար Նամե»- Դեհլավի «Իսկանդարի հայելին»: Նման զուգահեռ շարքով գրական հետևողության է դիմել նաև Խոջա Քերմանին, ինչպես նաև մի շարք այլ բանաստեղծներ¹:

Ինչ վերաբերվում է Նիզամու բանաստեղծական արվեստին, ապա նա համեմատվում է Ֆիրդուսու և Սաադիի հետ: Նիզամին ստեղծագործել է 12-րդ դարի ատրպատականյան համարվող գրական ոճի հետևողությամբ, որին առավել բնորոշ է դյուցազնականությունը:

Այս գլխում հատուկ շեշտվում է, որ Նիզամին պարսից բանաստեղծ է, և որ նրա ստեղծագործությունները իրենց լեզվով և բանաստեղծական պատկերներով ու արտահայտչամիջոցներով մասն են կազմում իրանական գրականությանը և չի կարելի նրան նույնացնել թուրքալեզու բանաստեղծ Դունավի Նիզամու հետ և ենթադրել, թե իրանական մեծ բանաստեղծը ազգությամբ պարսիկ չի եղել, այլ բռնության պարտադրանքով է պարսկերեն ստեղծագործել: Այնինչ Նիզամին տարբեր ստեղծագործություններում Իրանը գովերգում է որպես իր հայրենիք:

Ասվածը հավաստվում է նաև նրանով, որ Նիզամու ստեղծագործությունները ստուգաբանվում են իրանական բանաստեղծության շրջանակում:

¹ Սոհրանի Թովիդ, Իրանական գրականության պատմություն, Թեհրան, 1995, էջ 364, 372-373:

Ասվածը վերաբերվում է և «Խոսրով ու Շիրին» սիրավեպին, որն տարածված էր իրանական գրականությունում և որին Նիզամուգ առաջ դիմել են մի շարք իրանական գրողներ, այդ թվում և Ֆիրդուսին:

Այս սիրավեպում ասվում է, թե Շիրինը հրաշագեղ մի կին էր, ում սիրահարվում է Իրանի թագաժառանգ Խոսրով Փարվիզը, սակայն երբ գահին բռնի ուժով տիրում է Վահրամ Չուբին, սկսվում են գահակալական կռիվները, որոնց պատճառով թագաժառանգը ժամանակ չի ունենում հիշելու Շիրինին: Երբ նա վերականգնում է իր իրավունքները, այլևս չի հիշում Շիրինին և վերջինս առիթներ է որոնում վերստին հանդիպելու նրան: Մի անգամ, երբ Փարվիզը որսի է գնում, պճնված Շիրինը ելնում է նրան ընդառաջ և վերջինիս հոգում վերազարթնում է հին սերը այս հայուհու հանդեպ: Իր հավատարիմ մարդկանցից մի քանիսին նա պատվիրում է պահպանել Շիրինին և ինքը որսից վերադառնալուց հետո ամուսնանում է նրա հետ: Արքունի մեծամեծները թեև հավանություն չեն տալիս այս ամուսնությանը, Փարվիզը սակայն կարողնաում է համոզել նրանց:

Մեծ սիրո ցնցող պատմություն է այս սիրավեպի վախճանը: Մի գիշեր, երբ Իրանի արքան քնած էր իր սիրելիի հետ, դավադիր դաշյունն իջնում է Խոսրովի սրտին: Արյունաքամ արքան մահանում է լուռ, ոչ մի ճիչ չարձակելով, որպեսզի չարթնացնի և չվախեցնի իր սիրելուն՝ Շիրինին: Վերջինս արթնանալով և տեսնելով կատարվածը, սկսում է ողբալ իր սիրելիի մահը: Երբ Խոսրովին տանում են թաղելու, Շիրինը ժողովելով իր բոլոր ուժերը, դաշյունը խրում է իր կուրծքը և ընկնում սիրելիի մարմնի մոտ: Նա իր շունչն է տալիս անշունչ Խոսրովին, միանալով նրա հավիտենական նինջին: Նրանց թաղում են միասին և գերեզմանն անվանում Խոսրովի և Շիրինի դամբարան:

Ահա այս պատմության բանաստեղծական մշակմանն է ձեռնամուխ լինում Նիզամին: Բնականաբար, նա ընթանում է արևելյան սիրավեպի ուղիով և ոչ թե եվրոպական սիրահարական վեպերի:

Նիզամին այս պատմության տարբեր դրվագները բանաստեղծական չքնաղ պատկերների է վերածել: Նա սյուժեն այնպես է մշակել, որ դուրս է թողել Խոսրովի և Շիրինի նախաամուսնական սերը, որով

միաժամանակ ավելի է ընդգծել նրանց սիրո զգացման ուժգնությունը և միմյանց հասնելու տենչը:

Նիզամին սիրո իր ըմբռնումները շարադրել է այս ստեղծագործության սկզբում՝ «Մի քանի խոսք սիրո մասին» բաժնում, ուր նա սերը համարում է ողջ աշխարհի արարչության գաղտնիքն ու նպատակը և սիրով իմաստավորում աշխարհը՝ սկսած հյուլեից մինչև ամենամեծ համաստեղությունները: Սերն է համարում այն կամուրջը, որն կապում է հոգին և մարմինը:

Այս պոեմի շատ պատկերներ սյուժետային միանգամայն այլ դրվագներում իրենց բանաստեղծական զարգացումն էին գտնելու նրա մյուս ստեղծագործություններում:

Մեր հետաքննած մյուսի տեսանկյունից հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ այս սիրավեպի Նիզամու մշակումներում ոչ միայն Շիրինն է հայ, այլև ընթացող գործողությունները և պատմական միջավայրը սերտորեն կապված են Չայաստանի հետ: Հիշվում են Առանը և Չայաստանը ու նրանց իշխանուհի հայոց տիկին Մահին Բանուն, ով պատկերված է որպես ուժեղ մի անհատականություն: Նա Շիրինի հորաքույրն է: Շիրինն Խոսրովին ասում է, որ միայն ամուսնության դեպքում նրանը կդառնա, որ կիրքը դեռևս սեր չէ և Խոսրովի կիրքը Շիրինը կարողանում է վերածել իսկական սիրո և սերը մաքրագործում և դեպ վեհություն է տանում տղամարդուն ու կնոջը:

Շիրինն այս պոեմում ոչ միայն սիրող կին է, այլև Խոսրովի խորհրդատուն և նրան հեռու է պահում անարդար և սխալ վճիռներ ընդունելուց: Խոսրովը Շիրինի սիրով նաև մի հոգեփոխության է ենթարկվում:

Նիզամու այս ստեղծագործության յուրահատկությունը նաև այն է, որ նրանում չկա կնոջը վիրավորող, կնոջ անհավատարմության մասին մի որևէ տող, և որ այդ հավատարմությունը և նվիրվածությունը Խոսրովի դաշունահարությունից հետո հանգեցնում է նրա սիրելիի ինքնազոհաբերմանը:

Նիզամին իր այս ստեղծագործությամբ օրինակ ցույց տվեց պարսից հաջորդող բանաստեղծներին, թե ինչպես է հարկավոր գրել սիրո մասին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԻՋԱՍՈՒ «ԽՈՍՐՈՎ ԵՎ ՇԻՐԻՆ» ՊՈԵՄՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԲԱՆԱԴՅՈՒՄՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մինչ «խոսրով և Շիրինի» պատմության հայ գրականությունում առկա արձագանքները, այս գլխում ներկայացվում է ժողովրդա-ազգագրական այն ընդհանուր միջավայրը, որը կա թե՛ Նիզամու ստեղծագործությունում և թե՛ հայ գրականությունում ու ժողովրդական բանահյուսությունում և ազգագրությունում:

Քննության նման եղանակը հնարավորություն է տալիս վեր հանել երկու ժողովուրդների բանաստեղծական մտածողությունում և կենցաղում առկա ընդհանրությունները, որոնք իրենց հերթին ներկայացնում են պատմա-մշակութային այն ընդհանուր միջավայրը, որում ստեղծվել են թե՛ «խոսրով և Շիրինը» և թե՛ հայ միջնադարյան գրականության մի շարք ստեղծագործություններ և ժողովրդական ծագում ունեցող երկեր:

Երկու ժողովուրդների ամենօրյա կենցաղի և աշխարհայացքի միջև առկա ընդհանրությունների վերհանումը օգնում է հասկանալու այն նմանությունները, որոնք կան երկու գրականություններում, քանի որ ամենօրյա կենցաղի, հավատալիքների, երկրագործական մշակույթի և մի շարք այլ իրողությունների նմանությունը հանգեցնում է նաև համապատասխան ընդհանրությունների գրականությունում ժողովրդի կյանքը ներկայացնելիս, պայմանավորված թե՛ համապատասխան արտահայտչամիջոցներով և թե՛ կյանքից եկող և կյանքի այլևայլ կողմերը ներկայացնող պատկերներով: Նաև անհրաժեշտ է նշել, որ հատկապես բանահյուսության մեջ են երևում ժողովուրդների միջև առկա խորքային ընդհանրությունները, որոնք գալիս են նրանց ավանդական կեցության դարավոր ակունքներից:

Քննության այս մեթոդով նախ թվարկվում և ներկայացվում են իրանական ժողովրդական երգերի, ապա և հայկականի տեսակները, նրանց միջև առկա տաղաչափական և ոճական ընդհանրություններով:

Ցույց է տրվում նաև իրանական և հայկական կինոների միջև եղած ընդհանրությունները, որոնք պայմանավորված են ոչ թե մեկի մյուսից ազդեցությամբ, այլ գեղարվեստական մտածողության ընդհանրությամբ, որը ցույց է տալիս երկու ժողովուրդների միջև առկա ընդհանրության խորքային ակունքները: Այս հանգամանքը հուշում է, որ գրականության բնագավառում ևս առկա նմանությունները կարող են լինել ոչ միայն ուղղակի փոխազդեցության, այլ ծագումնաբանական նույն ակունքներից գալու հետևանք:

Այս գլխում այնուհետև բերվում են ժողովրդական բանահյուսության տարբեր նմուշներ բանահյուսական մի շարք ժանրերից ու ժողովրդական հավատալիքներից, որոնք տեղ են գտել նաև «խոսրով և Շիրին» պոեմում, ապա ներկայացվում են դրանց թեմատիկ համարժեքները հայ բանահյուսությունում և ազգագրությունում, թե անկախ Նիզամու ստեղծագործության սյուժետային-թեմատիկ ազդեցությունից, այս գործում առկա տարբեր մտքերը, արտահայտչամիջոցներն ու դարձվածքները կիրառվել են նաև հայ ժողովրդական բանահյուսությունում և հայկական ազգագրական միջավայրում: Այս առումով բնորոշ է հատկապես արևելյան գրականությունում և հայ ժողովրդական հավատալիքներում տարածված ֆատալիզմը՝ ճակատագրապաշտությունը, թե ճակատագրին հավատալու ձգտումը ինչպես է գեղարվեստական ստեղծագործություններում կանխորոշում սյուժեի և հերոսների գործողության ընթացքը:

Երկու ժողովուրդների բանաստեղծության համար առավել բնորոշ և կապող օղակ է աշուղական բանաստեղծությունը, որում առավել ցայտուն ձևով են դրսևորվում հայ և արևելյան բանաստեղծությունների գեղարվեստական մտածողության միջև առկա ընդհանրությունները:

Հավատալիքային առումով էլ այն առավել բնորոշ ձևով արտահայտվել է Միթրայի պաշտամունքի հետ կապված Միերի կերպարով, որն իրենում կրում է թե՛ իրանական և թե՛ արևմտյան միհրապաշտության

հատկանիշները, և ըստ երևույթին, փոխանցիկ օղակ է հանդիսացել իրանական ու արևմտյան միջրայիզմի միջև:

Չին հայկական դիցարանում այս զուգահեռը առավել ցայտուն է արտահայտվել Վահագնի, Աստղիկի և Անահիտի միջոցով, իսկ կրոնա-ծիսական տոներում և արարողություններում Տրնդեզով (Տյառնընդառաջ) և Վարդավառով:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՆԻՋԱՍՈՒ «ԽՈՍՐՈՎ ԵՎ ՇԻՐԻՆ» ՊՈԵՄԻ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ԱԶԳԱԳԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱԳՅՈՒՄԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՀԱՄԵՍԱՏՈՒՄԸ

Այս գլխում նախ ներկայացվում են հայ գրականությունում ուղղակիորեն հիշյալ սիրավեպին վերաբերվող հատվածները, որոնք տեղ են գտել տարբեր հեղինակների մոտ:

Այս շարքում ամենահինը և արժեքավորը 7-րդ դարի հայ պատմիչ Սեբեոսի Պատմությունն է: Պատմագիտական այս երկում Հայաստանի պատմությունը ներկայացվում է շրջակա երկրների և հատկապես Իրանի, Բյուզանդիայի և սկսված արաբական արշավանքների պատմությունների ընդհանուր համատեքստում: Այստեղ Խոսրովի և Շիրինի մասին պատմիչը գրում է իր պատմության երկու տարբեր հատվածներում և նրա հաղորդած տեղեկությունները կարևորվում են հատկապես այն պատճառով, որ նրանցում Խոսրովն ու Շիրինը ոչ թե սիրավեպի հերոսներ են, այլ պատմական անձնավորություններ: Խոսրովը պարսից նշանավոր թագավոր Խոսրով Բ Ապրուեզն է, ով 613թ. գրավելու էր Երուսաղեմը և ապա այն ետ էր վերցնելու Բյուզանդական Հերակլ կայսրը:

Խոսրովի և Շիրինի մասին Սեբեոսը գրում է իր Պատմության նախ ժԳ (13-րդ) և ապա ԽԶ (46-րդ) գլուխներում: Պատմիչը թեև մանրամասնաբար է նկարագրում Խոսրովի գործունեությունը պարսկաբյուզանդական հարաբերությունների շրջանակում, այս երկու գլուխներում, սակայն, նա գլխավոր շեշտադրումը ուղղում է Շիրինին: 13-րդ գլխում դա արտահայտվում է հենց տվյալ գլխի խորագրում, որն սկսվում է Շիրինի

անվան հիշատակությամբ. «Բարեպաշտութիւն Շիրին թագուհոյ: Հրաման Խոսրովայ՝ հաստատուն կալ և մնալ ի հայրենի աւրէնս»²:

Ասվում է, թե քանի որ գրադաշտական օրենքը թույլ էր տալիս բազմակնությունը, Խոսրով թագավորը բազմաթիվ կանայք ուներ, որոնց թվում և քրիստոնյա Շիրինը, որն էր «յոյժ գեղեցիկ»: Նա Խուժիստան աշխարհից էր: Ինչպես հայտնի է Խուժիստանում շատ քրիստոնյաներ կային և այստեղից էր նաև Գրիգոր Խուժիկը, որն նահատակվեց քրիստոնեությունը չուրանալու համար: Եղիշեի Պատմությունից տեղեկանում ենք, որ հայ ապստամբ նախարարների ու հոգևորականների մի մասին Հազկերտը արքորում է այս նահանգը, այնպես որ կան որոշակի պատմական վկայություններ Խուժիստանի հայերի մասին:

Ըստ Սեբեոսի Շիրինը առաջին տեղն էր գրավում Խոսրովի բազում կանանց մեջ: Ինչպես պատմիչն է գրում. «Սա է բամբիշն, տիկնանց տիկին»: Շիրինը օգտվելով իր դիրքից արքունիքին մոտակա վայրերում եկեղեցիներ և վանքեր է կառուցում և այնտեղ եկեղեցու սպասավորներ նշանակում, իսկ եկեղեցիները զարդարում արծաթյա ու ոսկյա սպասքով: Մոգերն ու քավղեմները չէին համարձակվում որևէ բան ասել և խոչընդոտել նրա գործունեությանը:

Պատմիչն այնուհետև գրում է, որ Շիրինի վախճանվելուց հետո այն մոգերը, ովքեր գրադաշտականությունից քրիստոնեությանն էին դարձել, նրանց նահատակում են: Տեսնելով քրիստոնյաների դեմ ծավալված այս հալածանքները, Խոսրովը դրանց վերջ է տալիս, ասելով, թե ով ինչ հավատի պատկանում է, թող այդ հավատին էլ մնա, քրիստոնյան՝ քրիստոնյա, գրադաշտականը՝ գրադաշտական:

Պատմիչն ակնարկում է, որ քրիստոնեությանը որոշակիորեն հարել է նաև Խոսրովը: Արմավենյաց տոմին, որը սիրված ժողովրդական տոն է Արևելքում և խորհրդանշում է զարմանը սկսվող բնության զարթոնքը, եկեղեցին կատարում է միախուսված Քրիստոսի Երուսաղեմ մուտքի տոմի հետ: Եվ ասվում է, թե այս տոմին Շիրինի հիմնած վանքերի

² Պատմութիւն Սեբեոսի, աշխտ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 85:

հոգևորականները գալիս էին արքունիք, թագավորի սենյակի մոտ եկեղեցական պաշտամունք մատուցում և Ավետարան կարդում, որի համար ոչ թե հալածվում էին թագավորից, այլ հակառակը՝ նրանից պարգևներ ստանում:

Խոսքով Բ-ն թեև գրավեց Երուսաղեմը և ավերեց այն, սակայն Քրիստոսի խաչափայտը տարավ և պահեց մեծ հարգանքով: Պատահական չէ, որ Բյուզանդական կայսրերը բանակցում էին նրա հետ Բաբելոնում գտնվող Դանիել մարգարեի մասունքների համար: Ուղղակի և անուղղակի այս վկայություններից կարելի է ենթադրել, որ գրադաշտման և խոսքովը հանդուրժող վերաբերմունք է ունեցել քրիստոնեության հանդեպ, որն ավելի է ընդգծվել անձնական հանգամանքներով՝ կապված Շիրիմի հետ, որին ինչպես նրանց նվիրված սիրավեպում է ասվում, սիրում էր առանձնահատուկ ձևով:

Այս գլխում եթե պարզապես նշվում է Շիրիմի քրիստոնյա լինելու մասին, ապա ԽՁ (46-րդ) գլխում արդեն ասվում է նրա հայոց դավանանքին և եկեղեցուն պատկանելու մասին: Սեբեոսի Պատմության այս գլուխն այս հոգևորականության և նախարարների պատասխան թուղթն է Բյուզանդական Կոստանդին կայսրին, որը վերաբերվում է դավաբանական հարցերին և երկու եկեղեցիների փոխհարաբերություններին: Այս թղթում պաշտպանվում է հայոց դավանանքը և ընդգծվում Դայոց եկեղեցու բարձր դիրքը Արևելքում: Որպես ասվածի հավաստում բերվում է հետևյալ օրինակը: Նշվում է, որ Կավատի որդի Խոսրովի ժամանակից Պարսից երկրի քրիստոնյաները պետք է ենթարկվեին Դայոց եկեղեցուն, որին է պատկանում և «աստուածաւեր թագուհին Շիրիմ»³:

Թագուհու եկեղեցական պատկանելությունը վստահաբար ցույց է տալիս նաև նրա ազգային պատկանելիությունը: Այլապես եթե նա որևէ այլ ազգության լիներ, ապա կպատկաներ տվյալ ժողովրդի եկեղեցուն, ինչպես, օրինակ, ասորական, դպտական և կամ էլ Եթովպական:

³ Նույն տեղում, էջ 151:

Սեբեոսի այս երկու հիշատակությունները թեև եկեղեցա-կրոնական բնույթ ունեն, սկայն սիրավեպին համահունչ ձևով նաև ցույց են տալիս Խոսրովի խորին սերը և նվիրվածությունը Շիրիմի հանդեպ, այլապես նա դժվար թե այդքան արտոնություններ տար քրիստոնյաներին:

Այս սիրավեպի մի քանի տարբերակներ կան: Ինչպես երևում է Սեբեոսի գրածից, նրան հայտնի է եղել այս պատմության այն տարբերակը, որում ոչ թե նախ Խոսրովն է սպանվել, որից հետո Շիրիմն ինքնասպան է եղել, այլ հակառակը՝ Խոսրովը մի որոշ ժամանակ ապրել է իր սիրելու մահից հետո: Ըստ երևույթին այդ սիրո արտահայտությունն և հիշատակը պահելու դրսևորումն է եղել և այն, որ Շիրիմի մահից հետո Խոսրովը թույլ չի տվել, որ հալածեն քրիստոնյաներին, ինչպես նաև պահպանել է Շիրիմի հիմնած վանքը:

«Խոսրով և Շիրիմի» հայ միջնադարյան չափածոյում անուղղակի անդրադարձներից է Շիրիմի քանիցս հիշատակումը հայ բանաստեղծների կողմից: Ճիշտ է, թեև ողջ սիրավեպը չէ, որ վերապատմվում է կամ վկայակոչվում, սակայն Շիրիմի կերպարը հանդես է գալիս որպես կանացի գեղեցկության և խոհեմության կերպար: Զովասափ Սեբաստացին, Սայաթ Նովան և տարբեր հայ աշուղներ գովերգելով կնոջը, որպես համեմատության բարձրագույն չափանիշներից մեկը, իրենց երգած կնոջը համեմատում են Շիրիմի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նիզամու «Խոսրով և Շիրիմ» ստեղծագործությունը համեմատելով հայ գրականության համապատասխան մոտիվների հետ գալիս ենք հետևյալ եզրահանգումներին.

1. Նիզամու այս ստեղծագործությունը ճիշտ հասկանալու համար այն հարկավոր է քննել մեծ բանաստեղծի ստեղծագործությունների ընդհանուր համապատկերում, այս սիրավեպում գտնելու թե նրա մյուս գործերին բնորոշ հատկանիշները և թե այն առանձնահատկությունները,

որոնք «կան այստեղ և պայմանավորված են ընտրված թեմայի յուրահատկություններով:

2. Նիզամու «խոսրով և Շիրին» ստեղծագործության համեմատության համակողմանի քննության համար հարկավոր է այն համեմատել այս ստեղծագործության ժողովրդական տարբերակների հետ, որոնք օգնում են վեր հանելու Նիզամու գրական նախասիրությունները և այս թեման վերամեկնաբանելու ու գրական մշակման ենթարկելու սկզբունքները:

3. Իր բանաստեղծության մեջ Նիզամին ժողովրդի հետ խոսելու համար օգտագործում է առածների լեզուն.

Մի երկարացրու ոտքդ քո վերմակից ավել:

Եթե չես ուզի վայր ընկնել, ինչպես ստվեր,

Ելարան մի ել աստիճան-աստիճան ի վեր:

Կարևորելով ժողովրդական մշակույթի դերը՝ իր բանաստեղծություններում Նիզամին դիպուկ ու ազդեցիկ խոսքերով հատուկ երանգ է հաղորդել իր գործերին:

4. Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ պոեմում առածները կազմում են ընդհանուրի 22 տոկոսը, ժողովրդական դարձվածքներն ու բարբառային ձևերը՝ 13, առասպելական ու հեքիաթային բառերը՝ 6, բժշկական տեղեկությունները՝ 2, հավատալիքները՝ 4, ժողովրդական սովորույթները՝ 2, իսկ հակվածությունը դեպի նյութական կյանքը՝ 4 տոկոս:

5. Պետք է խոստովանել, որ Նիզամու «խոսրով և Շիրին» պոեմում կիրառված բարբառային ձևերն ու դարձվածքներն ավելի քիչ են, քան նրա մյուս գործերում: Թե ինչու է Նիզամին այդքան առածներ ու դարձվածքներ օգտագործել «խոսրով և Շիրին» պոեմում, մեզ մտածելու տեղիք է տալիս: Միգուցե դա պայմանավորված է պատմվածքի արտահայտման ձևով: Իր «խոսրով և Շիրին» պոեմում Նիզամին ավելի շատ խոսել ու բանավիճել է առածների ու դարձվածքների ձևով՝ ի տարբերություն իր մյուս՝ «Հաֆթ Փեյքար»,

«Լեյլի և Մաջնուն» պոեմների, որոնք ավելի շատ վիճաբանական բնույթ ունեն:

6. Այս երկի տեղը իրանական գրականությունում և նրա թողած ազդեցությունը ճիշտ հասկանալու համար հարկավոր է այն համեմատել իրանական գրականությունում այս թեմայի մյուս գրական մշակումների հետ, հատուկ ուշադրություն դարձնելով այն հեղինակների երկերին, ովքեր անմիջաբար ազդվել են Նիզամուց:

7. «խոսրով և Շիրին»-ի ընդհանուր արևելյան տարածվածության մասին ընդգրկուն պատկերացում կազմելու համար հարկավոր է ուսումնասիրել նրա մասին եղած հիշատակությունները հայ գրականության մեջ:

8. Հայ միջնադարյան գրականության մեջ այս սիրավեպը հիշվում է թե՛ որպես իրանական պատմության մի դրվագ համապատասխան պատմական միջավայրում և թե՛ որպես արևելյան սիրավեպ տեղայնացված հայկական միջավայրում:

9. 7-րդ դարի հայ պատմիչ Սեբեոսի Պատմության 13-րդ և 46-րդ գլուխները նկարագրում են այս ավանդության պատմական հիմքը և սկզբնաղբյուրային կարևոր պատմական տեղեկություններ են հաղորդում հատկապես Շիրինի մասին:

10. Շիրինի մասին հայ բանաստեղծների մոտ եղած հիշատակությունները վկայում են, որ Հայաստանում բավականին տարածված ու սիրված է եղել այս պատմությունը:

11. Հայ բանաստեղծների կողմից Շիրինին տրված բնորոշումները ցույց են տալիս, որ հայ ստեղծագործողների կողմից նա համարվել է գեղեցկության և կանացի խոհեմության չափանիշային մի հասկացություն, և ըստ այդմ բանաստեղծները իրենց գովերգած կանանց համեմատել են Շիրինի հետ:

12. «Խոսրով և Շիրին»-ի հայ գրականության հետ ունեցած ընդհանրությունները միայն այս ստեղծագործության սյուժեով չեն պայմանավորված, այլ ունեն առավել խորքային բնույթ:
13. «Խոսրով և Շիրին» ստեղծագործությունը իրանական կյանքի մի յուրօրինակ հանրագիտարան է, ուր կյանքի այլևայլ կողմերի բանաստեղծական նկարագրությունները պայմանավորված են իրանական ազգագրական սովորություններով և ժողովրդական բանահյուսությամբ:
14. Պայմանավորված իրանական և հայ ժողովուրդների դրկից լինելով և պատմա-մշակութային վաղնջական կապերով, «Խոսրով և Շիրին»-ում նկարագրված ազգային միջավայրը որոշակիորեն առկա է նաև հայ կյանքում և իր արտացոլումն է գտել հայ ազգագրությունում և ժողովրդական բանահյուսությունում:
15. Հին հայկական հավատալիքների և առասպելների ուսումնասիրության արդյունքում երևում են մի շարք նշաններ, որոնք հին հայերի հավատալիքները տանում են դեպի միհրդատապաշտություն, Մանիի ուսմունք և զրադաշտականություն: Բացի այդ, դեռևս հին ժամանակներից հայերն ու պարսիկներն ունեցել են միասնական տոներ՝ իրանացիների Սադեյի և հայերի Տյարնընդառաջը, իրանցիների Նոսարդն ու հայերի Նավասարդը, իրանցիների Տիրգան և հայերի Վարդավառը, իրանցիների Բարդանդան և հայերի Բարեկենդանը: Այս նշանները ապացուցում են երկու ժողովուրդների մշակութային նմանությունը:
16. Համեմատական գրականությունը որպես գրական ստեղծագործության քննության մեթոդ «Խոսրով և Շիրին»-ի օրինակով վերստին գալիս է հավաստելու, որ մի շարք սյուժեներ ստուգաբանվում և առավել համակողմանի են լուսաբանվում հարևան ժողովուրդների գրականությունների հետ տարված զուգահեռներով և համադրական վերլուծությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴԿԱԾՆԵՐԸ

1. Շիրինի երկակի անհատականությունը Նիզամու «Խամսե»-ում և այլ պատմական աշխատություններում, «Գարուն», Երևան, 2011, թիվ 9-10, էջ 142-146:
2. Հայ-իրանական կանանց և Անահիտ աստվածուհուն նվիրված տոնակատարության արձանները, «Գարուն», Երևան, 2011, թիվ 9-10, էջ 84-88:
3. Հայ գրականության ամենահայտնի աշուղական դեմքը՝ Սայաթ-Նովան, «Գարուն», Երևան, 2012, թիվ 1-2, էջ 50-54:

GITI EHRAHIMI FARAJI
THE PETITIONS OF NIZAMI'S "KHOSROV AND SHIRIN" POEM
WITH THE ARMENIAN LITERATURE

This dissertation has been guaranteed to be maintained for granting Candidate's degree in philological sciences 10-01-07 with the qualification of "Foreign Literature."

The defense will be held on 15 March 2013, at 14⁰⁰, in the specialized council of "Armenian and Foreign Literature" 003 at the institute of Literature after M. Abeghyan NAS RA. Address: 15 Grigor Lusavorich str., Yerevan, RA

Summary

The poem "Khosrov and Shirin" is one of the significant works of Nizami (who died in 1235), the plot of which is a favorite love story not only in Iran, but also in the literature of the neighboring peoples including the Armenian literature. This work refers to Nizami literal version of this poem. The latter is compared to the other Iranian works based on this theme. It also involves the influence the romance "Khosrov and Shirin" has on the Armenian folk lore, the Armenian medieval literature and on the Armenian ethnographic culture.

The work includes the preface, four chapters, the conclusion, and the list of the literature used. The preface refers to the purpose of the research work including the problem related to it and the history of the romance.

The first part of the first chapter called "Comparative Literature and the Role it Plays for the Recognition of Peoples' Cultures" refers to the emergence of the method of the comparative literature as a unique literal method and its importance in the literature of different peoples and it is especially aimed at showing the peculiarities of the given popular art.

The second chapter covers the reflection of Nizami's "Khosrov and Shirin" on the Armenian literature and the advantages of the afore-mentioned method in this direction. The first part of the second chapter is called "Nizami's Life and Creations" and is devoted to the general description of Nizami's life story and his works in the common framework of the Iranian poetry.

The second part of this chapter is devoted to the analysis of the poem "Khosrov and Shirin" and the people's varieties of this romance in the Iranian literature.

Armenia is also mentioned in diverse varieties of this romance, according to which, the main heroine was an Armenian woman Shirin by name, some activities are connected with Armenia, and one of the personages was the Armenian mistress Mahin Banu.

This very creation of Nizami gave a proper example to the Iranian poets coming next to him in the process of creating different literal varieties of this romance.

The third chapter is called "People's culture and literature in Nizami's "Khosrov and Shirin" poem and in Armenian folk lore." It is devoted to the ethnographic environment available both in Nizami's poem and in the Armenian literature, folk lore and ethnography.

This way of research enables readers to specify the generalities available in the poetic mentality and lifestyle of the two peoples, which, in their turn, present the historical-cultural common environment which resulted in the creation of the poem "Khosrov and Shirin", as well as a number of literal works in the Armenian medieval literature.

The fourth chapter is called "Comparison of Nizami's poem "Khosrov and Shirin" and the Armenian ethnography and folk lore." This chapter refers to the records in the Armenian literature, the oldest of which are the 13th and the 46th chapters of the History written by the Armenian historic Sebeos who lived in the 17th century. According to Sebeos, Khosrov and Shirin were historical personalities, and Shirin was the most beautiful woman in Khosrov's kingdom. Khosrov was noted as Apruez of the Iranian Khosrov II king, who, in 613, would conquer Jerusalem.

Armenian poets have repeatedly mentioned Shirin in their literary works, which was an indirect reflection of this poem on the Armenian medieval poetry. The whole of the romance hasn't been retold word by word, but Shirin's character was a striking example of feminine beauty and commonsense. A number of Armenian

medieval poets, as one of the highest criteria of comparison, compared their praised women with Shirin.

The chapter "Conclusions" includes 12 items which refer to the inferences based on this research work, according to which, the records concerning the poem "Khosrov and Shirin" in the Armenian literature are important for specifying the popularity of this romance in the lives of the peoples living in the countries neighboring Iran.

ГИТИ ЭБРАГИМОВНА ФАРАДЖИ

Просьбы от произведения Низами "Хосров и Ширин" с армянской литературой

Диссертация представлена к защите научной степени кандидата филологических наук по специальности 10-01-01 "Армянская классическая литература (Армянская литературная классика)".

Защита состоится, 13-ого марта 2013 года в 14⁰⁰, на совете по специальности 003 "Армянская и зарубежная литература" при институте литературы имени М. Абеяна. Национальной Академии Наук Республики Армения. По адресу: Ереван ул. Григора Лусаворича, 15.

Резюме

Одно из знаменитых произведений Низами (скончавшемся в 1235г.) является поэма "Хосров и Ширин", сюжет которой был любим и известен не только в Иране, но и в литературе разных народов соседних стран, в том числе и у армян. В этой работе представлено литературная разработка произведения Низами. Это произведение сравнивается с другими иранскими произведениями, написанными по этой теме, а также отражение любовного романа "Хосров и Ширин" в армянском народном фольклоре, в средневековой армянской литературе и также в этнографической культуре.

Работа состоит из предисловия, из четырех глав, заключения и из списка использованной литературы. В предисловии представляется цель исследования, поставленные задачи и история вопроса.

В первом разделе первой главы, которая озаглавлена - "Сравнительная литература и её роль в познании культуры народов", представлено появление метода сравнительная литература, как литературно- исследовательского метода и его значимости в литературе разных народов, особенно в выявлении закономерностей в народном творчестве. Во второй главе раскрывается превосходство выявления имеющегося в армянской литературе, отражения произведения "Хосров и

Ширин" этим методом. Первая часть второй главы называется "Жизнь и произведения Низами», где представлены его жизненный путь и творчество в общем контексте иранского стихосложения.

Вторая часть этой главы посвящена анализу произведения "Хосров и Ширин" и народному разнообразию вариантов этого любовного романа в иранской литературе, а также обработке литературных вариантов.

Также в произведении отмечается связь с Арменией. Главная героиня Ширин по национальности армянка, часть сюжета связана с Арменией и одно из действующих лиц - армянская княгиня Маин Бану.

Это произведение Низами послужило примером для дальнейшей литературной обработки любовного романа "Хосров и Ширин" следующими поколениями иранских поэтов.

Третья глава называется "Народная культура и литература в поэме Низами "Хосров и Ширин", и в армянском фольклоре". Здесь представлена жизнь народа и та этнографическая среда, которая присутствует, как в этом произведении, так и в армянской литературе и в фольклоре.

Этот способ исследования дает возможность выявить сходство между поэтическим мышлением и бытом этих двух народов, в свою очередь представляющие ту культурно-историческую общую среду, которая способствовала рождению произведения "Хосров и Ширин", а также произведений, имеющих народные корни в армянской средневековой литературе.

Четвертая глава: "Сравнение этнографического и фольклорного материала армянской литературы с поэмой Низами "Хосров и Ширин". В этой главе приводятся упоминания об этом любовном романе в армянской литературе, самое древнее из которых, в 7ом веке у историка Себеоса, в 13ой и 46ой главах его Истории.

Себеос говорит о Хосрове и Ширин, как об исторических личностях, свидетельствуя о том, что Ширин была самой красивой

женщиной королевства Хосрова, а Хосров тем самым иранским шахом - Хосров 2 Апруезном, который в 613 году завоевал Иерусалим.

Неоднократное упоминание Ширин в армянской поэзии, является косвенным воздействием этой поэмы "Хосров и Ширин". Хотя вся поэма не пересказывается, но образ Ширин в армянской литературе представляется, как эталон женственной красоты и целомудрия. Ряд средневековых армянских поэтов, как высочайший критерий сравнения воспетой ими женщины, сравнивают ее с Ширин.

Шарль? Этот вопрос...
...в Хорхе и Шарле...
...в Хорхе и Шарле...

Может быть, Шарль...
...в Хорхе и Шарле...
...в Хорхе и Шарле...

Этот вопрос...
...в Хорхе и Шарле...
...в Хорхе и Шарле...


Этот вопрос...
...в Хорхе и Шарле...
...в Хорхе и Шарле...

Третья глава...
...в Хорхе и Шарле...
...в Хорхе и Шарле...

Этот вопрос...
...в Хорхе и Шарле...
...в Хорхе и Шарле...

Четвертая глава...
...в Хорхе и Шарле...
...в Хорхе и Шарле...

Этот вопрос...
...в Хорхе и Шарле...
...в Хорхе и Шарле...



ՀՀ Ազգային գրադարան



NL0550063

